ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՑ ՄԵՐՈՑ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿԱՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ԱՆԴԱՄՈՑՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ
ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ, ՈՐ Ի ՄՈՆՐԷԱԼ, ԿԱՆԱԴԱ

Կանադայի Հայոց Թեմի տարեկան Պատգամաւորական ժողովի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում թեմական Առաջնորդ Գերաշնորհ Տ. Արգար եպիսկոպոս Հովակիմեանին, հոգևոր ուխտապահ դասին, թեմական ու ծխական խորհուրդների և ժողովի պատուարժան անդամներին և կանադահայ հաւատաւոր Մեր բոլոր զաւակներին:

Գոհութիւն և փառք ենք մատուցում Երկնավորին, որ Կանադայի հայոց թեմը արդիւնաւորում է իր առաքելութիւնը Կանադայում բնակեալ մեր ժողովրդի կեանքում: Հոգևոր սպասաւորներիդ, թեմական ու ծխական կառոյցների անդամներիդ նուիրեալ ջանքերի ու յանձնառութիւնների շնորհիւ Քրիստոսասէր Մեր զաւակները, միաբանուած մեր եկեղեցիների հովանու ներքոյ, շարունակում են կենսունակ պահպանել իրենց ազգային ու հոգևոր կեանքի անդաստանը՝ դրոշմուած հաւատի շնչով և զարդարուած աստուածահաճոյ իրագործումներով:

Սիրելիներ, արցախեան 44-օրեայ պատերազմից յետոյ նոր խնդիրներ ու մարտահրաւէրներ են ծառացած հայրենի մեր երկրի, յատկապէս՝ Արցախի առջև: Ռազմական գործողութիւնների հետևանքով հազարաւոր հայորդիներ տարագրուել են իրենց բնակավայրերից, հայտնվել հոգեբանական ու կենցաղային դժուարին կացութեան առջև: Ադրբեջանը շարունակում է իր թշնամական գործողութիւնները՝ Հայաստանի և Արցախի սահմաններում, պարբերաբար սադրանքներով ահաբեկում նաև խաղաղ բնակչութեանը՝ նպատակ հետապնդելով հայաթափել Արցախը և տկարացնել մեր հայրենիքը:

Այս դժուարին իրավիճակում Առաքելական մեր Սուրբ եկեղեցին ջանքեր է բերում՝ զօրացնելու համազգային միաբանութիւնը և մեր ժողովրդի կարողութիւնները նպատակաուղղելու առկայ խնդիրների լուծմանը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ Արցախի օգնութեան յանձնախումբը և Արցախի հոգևոր-մշակութային ժառանգութեան հարցերով գրասենեակը կարևոր աշխատանք են իրականացնում՝ համակարգելու այս ուղղութեամբ մեր Եկեղեցու հնարաւորութիւնները և մեր թեմերի և հաւատաւոր հայորդեաց զօրակցութեամբ իրականացող բարեսիրական ծրագրերը: Մենք ազգովի պիտի շարունակենք ամենայն ջանք ու կարողութիւն ներդնել, որպէսզի Արցախի Մեր հերոս զաւակները ապագայի հանդէպ լաւատեսութեամբ վերանորոգեն իրենց կեանքը և, ամուր կառչած հայրենի հողին, կառուցեն իրենց ապագան:

Սիրելիներ, մեր ազգային իղձերի ու նպատակների իրագործման, մեր նոր յաղթանակների ու ձեռքբերումների կերտման ճանապարհը Հայրենիքի և Սփիւռքի զօրացումն է՝ աշխարհսփիւռ հայորդեաց նուիրեալ աշխատանքով, ազնիւ յանձնառութիւններով ու զոհողութիւններով: Այս առումով Մեր յորդորն է ձեզ, որ առ Աստուած ապաւինութեամբ և անսպառ եռանդով ամուր ու անսասան պահէք Կանադայի Հայոց Թեմը՝ իր եկեղեցիներով, ծուխերով ու համայնքային հաստատութիւններով և առաւելագոյն ջանքեր բերէք՝ Քրիստոսի կենարար խօսքը մատուցելու հաւատաւոր հայորդիներին և մեր Սուրբ Եկեղեցին կարևոր ներկայութիւն դարձնելու նրանց կեանքում: Մեր պատգամն է նաև, որ ձեր գործունէութեան մէջ շարունակէք կարևորութիւն ընծայել Հայրենիքի առջև ծառացած դժուարութիւններին՝ նպաստելով դրանց լուծմանը ու հայրենաբնակ մեր ժողովրդի բարօրութեանը:

Պատգամաւորական ժողովի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Թեմական բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Արգար եպիսկոպոս Հովակիմեանին և հոգևոր դասին, թեմական ու ծխական խորհուրդների, տիկնանց ու երիտասարդաց միութիւնների, կրթական, մշակութային ու բարեսիրական հաստատութիւնների պատուարժան անդամներին և մաղթում նորանոր յաջողութիւններ՝ ի նպաստ Թեմի պայծառութեան և հաւատացեալ հայորդեաց բարօրութեան:

Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Բարձյալ Տէրն առատապէս օրհնի ամենքիդ և աջակից լինի ձեր գովարժան ծառայութեան մէջ՝ Իր Ամենազօր Աջի ներքոյ պահպանելով Կանադայի Հայոց Թեմի և կանադաբնակ Մեր հաւատաւոր զաւակներին:

Ողորմութիւն Աստուծոյ, շնորհք և սէր Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 24-ն Մայիսի
յամի Տեառն 2022 և ի թուին հայոց ՌՆՀԱ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 2140